ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ապրիլի 26-ից 28-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Սենիկ Ներսիսյան - Մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների կազմակերպման և հսկողության բաժնի պետ

Արփինե Գրիգորյան - Միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2" Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ապրիլի 26-ից 28-ը

3" Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայություն

4" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ Ղեկավարների խորհուրդ) 76-րդ նիստի նախապատրաստական աշխատանքների հետ կապված փորձագետների հանդիպում:

5" Քննարկված թեմաները՝

Ղեկավարների խորհրդի փորձագետների հանդիպման ընթացքում քննարկվել և համաձայնեցվել են որոշումների նախագծերը ավելի քան 11 հարցերի շուրջ, այդ թվում նաև՝ մաքսային մարմինների կողմից տրանսպորտային և առևտրային փաստաթղթերը կնիքելու և դրոշմակնիքելու կարգի մասին, ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների և երկաթուղային փոխադրողների փոխգործակցության մասին, մաքսային ծառայությունների համար կադրերի պատրաստման և վերապատրաստման մասին, միջազգային փոխադրումներ

իրականացվող բեռնափոխադրողների մասին տեղեկատվության փոխանակման, որոշ տեսակի ապրանքների դասակարգման և այլն:

6"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ժամանակ քննարկվել են երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության և մաքսային գործողությունների իրականացման ժամանակ ԱՊՀ անդամ պետությունների մաքսային մարմինների և երկաթուղային փոխադրողների փոխգործակցության մասին հարցերը, Համաշխարհային մաքսային կազմակերպությունում ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ առանցքային հարցեր, ՀՄԿ աշխատանքային խմբերի հանդիպումների ժամանակ անգլերենից և ֆրանսերենից բացի այլ լեզուների կիրառման վերաբերյալ հարցեր, և այլն:

7" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման վերջում ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 76-րդ նիստի նախապատրաստական աշխատանքների հետ կապված փորձագետների հանդիպման արձանագրությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ս.թ. հունիսի 6-ին կայանալիք ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 76-րդ նիստի ընթացքում արդեն ստորագրել մաքսային մարմինների կողմից տրանսպորտային և առևտրային փաստաթղթերը կնիքելու և դրոշմակնիքելու կարգի մասին համաձայնագիրը:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ԱՊՀ անդամ պետությունների միջև ավելի սերտ համագործակցության և մաքսային ոլորտում աշխատանքների ակտիվացման վերաբերյալ:

9" Ստորագրությունը, ամսաթիվը

Ա. Հ. Երանոսյան